

16433


# ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԹԱԼԱԾԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՑԻՑ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ  
ՄԻՈՒԹԵԱՆ

(Թալաս, Թավուսուն, Կէրմիք եւ Տէրէվանք)

ԳԵՂՐՈՒՐ

1932



2010

## ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

**ԹԱԼԱԾՈՒՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ**

### ՄԻՈՒԹԵԱՆ

1-. Միութիւնը կը կոչուի Թալասի եւ Շրջակայից Հայրենակցական Միութիւն :

2-. Միութեան կրնան մասնակցի, Թալաս, Թավուսուն, Կերմիր և Տէրէվանք գիւղերու բնակիչները :

### Բ. Անդամակցութիւն

1-. 18 Տարեկանը լրացուցած բոլոր երկսեռ հայրենակիցները կրնան անդամակցիլ մէկ անդամ մուտքի տուրք և կանոնաւորապէս ամսավճար տալով Միութեան :

2-. Մուտքի տուրքի և ամսավճարներու քանակը ամէն մի անդամի աւելի կօմ պակաս վճարելու իր նիւթական պայմաններէն կախուած է և կ'որոշուի օրուայ վարչութեան և անդամի կողմէ համախօրհուրդ :

3-. Պէյրութի մօտակայ գիւղերուն մէջ գտնուղ հայրենակիցներ Միութեան կրնան մասնակցիլ ընտրելու իրաւոնքը ունենալով, պայմանաւ որ, ընտրելին Պէյրութաբնակ ըլլայ և իրենք ալ քուէարկութեան օրը ներկայ գտնուին ընդհանուր ժողովին :

### Գ. Նպատակ

1-. Անկար և կարօտ հայրենակիցներու նիւթապէս և բարոյապէս օժանդակել :

2-. Աղքատ ընտանիքներու պատկանող և ապագայ խոստացող երկսեռ պատանիներու նախնական և միջնակարգ ուսում տալու համար նիւթապէս և բարոյապէս սատար հանդիսանալ :



Տ 5088

3-. Միութիւնը պիտի ի մի հաւաքէ և կազմակերպէ իր երկսեռ պատսնի անդսմները և պիտի ջանայ զանոնք հեռու պահել ապազգայնացնող յոռի վայրեր յաճախելէ և առ այդ պիտի ջանայ զանազան միջոցներով անոնց ազգային, մտային և քաղաքացիական ընբաժները զարգացնելով իրար օգնութեան վարժեցնել և ֆիզիքական կրթութիւն տալ:

4-. Օրուայ վարչութիւնը պարտականութիւնը ունի մասնաւոր ծրագիր մը պատրաստել պատանիներու շարժումը վարելու համար, պայմանաւ որ ան չ'ափասի Միութեան Ծրագիր Կանոնագրի ոգւոյն եւ հետապքնած նպատակին, եւ նաև պիտի կատարէ խնամակալի գերը սոյն կազմակերպութեան նկատմամբ.

5-. Միութիւնը պիտի աշխատի Սուրբայ եւ Արտասահման գտնուող հայրենակիցներու հետ հաղորդակցութեան մէջ մտնել եւ թելողել զանոնք որպէսզի կազմակերպուին որ պէս հայրենակիցներ:

6-. Միութիւնը պիտի աշխատի օժանդակել նիւթապէս եւ բարոյապէս այն բոլոր հաստատութիւններուն որոնք արտասահմանի մէջ հայութիւնը հայ պահելու կը ձգտին:

7-. Միութիւնը պիտի օժանդակէ այն հայրենակիցներուն որոնք Թիւրքիայէն Սուրբա գաղթել կը փափաքին եւ որուէ կերպով Միութեան օժանդակո թեան պէտք ունին: *59, 787-նի*

8-. Միութիւնը կուսակց սկան եւ յարանուանական որեւէ նպատակ չ'հետապնդեր եւ կարելին պիտի ընէ իր չէզօքութիւնը ամուր պահելու համար:

9-. Միութիւնը իր կարելի միջոցներով պիտի քաջալերէ այն հայրենակիցները որոնք կը լիւափաքին Հայաստան գաղթել:

10-. Միութիւնը պիտի այսուհետեւ մասնաւոր հողամաս



մը գնելով Սուրբայ որեւէ մասին մէջ հայրենակցական նոր թաղ մը կառուցանելու առ այդ պիտի գիմէ առ ապասահման գտնուող իր բարեկեցիկ հայրենակիցներուն նիւթական եւ բարոյական աջակցութեան:

11-. Միութիւնը պիտի հետաքրքրուի հայրենակիցներուն յատուկ ազգային եւ եկեղեցական կտակներու հարցով:

**Դ. Հասոյրի աղբիւրներ**

Միութեան հասոյթի աղբիւրներն են:

1-. Մուտքի գրամ եւ անդսմավճար:

2-. Կամաւոր նուէրներ:

3-. Հանգանակութիւն բացառիկ պարագաներու մէջ:

4-. Ամուսնութեան եւ այլ պարագաներու տակ հայրենակիցներու տրուելիք վկայագիրներէ գանծուած գումարներ:

5-. Արտասահման գտնուող հարուստ հայրենակիցներու նուէրները:

6-. Միութեան կողմէ ըլլալիք զանազան ձեռնարկներէ (հանդէս, ներկայացում, վիճականութիւն եւն.) գոյանալիք հասոյթ:

**Ե. հասոյրի գործածութիւն**

1-. Միութեան հասոյթէն միայն (20) քսան սուրբական ոսկի պիտի մնայ գանձապահի մօտ իսկ մնացածը պիտի գրուի վստահելի գրամատան մը մէջ:

2-. Արտասահմանէն գալիք գրամներուն քսանրկինքն աւելին վստահելի գրամատան մը միջոցաւ կը զրկուի վարչութեան:

3-. Դրամական բոլոր գործառնութեանց համար վարչութեան ատենապետի ատենադպրի եւ գանձապահի ստորագրութիւնները պայման են:

4-. Այն պարագային երբ նուիրատուները իրենց նուէրներու գործածութիւնը միշտն որոշ նպատակի մը համար կը սահմանափակեն, վարչութեան ամբողջ կազմը պատասխանատուէ նուիրատուի կամքին ֆլուրիտ գործադրութեան:

### Զ. Կազմակերպյական

1-. Վարչութիւնը կընտրուի անդամական ընդհանուր ժողովներէ առաւելագոյն քուէ շահողներէ:

2-. Վարչութիւնը կը բաղկանայ Յ-Ղ անդամներէ և պաշտօնավարութեան շրջանը Յ ամիսէ, եւ իր մէջէն կընտրէ դիւանը:

3-. Վարչութիւնը կընտրուի թիկնածուներու երկանուն ցանկէն եւ գաղտնի քուէքարկութեամբ:

4-. Ընդհանուր ժողովը օրինաւոր կը նկատուի երբ անդամակնար տուող անդամներու մեծամասնութիւնը գոյանայ (Կէսէն մէկ աւելին մեծամասնութիւն կը նըկատուի):

5-. Այն պարագային երբ անդամական ընդհանուր ժողովը մեծամասնութիւն չ'գոյացած ըլլալուն համար թրուի, անդամական երկրորդ ժողովը ամէն պարագայի տակ օրինաւոր պիտի նկատուի:

6-. Վարչութիւնը իրաւունք ունի ի պահանջել հարկին զանազան անդամները խորհրդակութեան հրաւիրելու, եւ մասնաւոր ձեռնարկներու յաջողութեան համար իրեն ենթակայ Յանձնախումբեր կազմելու:

7-. Այն պարագային երբ վարչութեան անդամներէն մին քաղաքէն մէկնի եւ կամ ուէ պատճառով մը իր պաշտօնէն հրաժարի վարչութիւնը իրաւունք ունի ընդհանուր ժողովէ ընտրուած թիկնածուներու մէջ յաջորդ առաւելագոյն քուէ շահող անդամը հրաւիրելու անոր տեղ:

8-. Իւրաքանչիւր Յ ամիսը անդամ մը եւ ըստ պահանջին աւելի յաճախի եւ կամ անդամներու մէկ երթարքին, փալիաթին վրայ վարչութիւնը պարտականութիւն ունի անդամներն ընդհանուր ժողովի հրաւիրելու, ուր, իր նիւթական եւ բարոյական գործունեութեան համար հաշուէտուութիւն պիտի կատարի:

9-. Վարչութեան անդամները վերընտրելի են:

10. Վարչութիւնը համարատուէ միմիայն ընդհանուր ժողովին:

11-. Հրաժարող անդամները իրաւունք չունին հաշիւ կամ գրամ պահանջելու:

12-. Վարչութիւնը հաւաքարար պատասխանատուէ Միւթեան գոյգերուն եւ դրամին:

13-. Վարչութեան հաշուէտութիւնը լրանալէն յետոյ եւ կամ պէտք տեսնուած պարագային ընդհանուր ժողովը իր մէջէն կընտրէ (Յ) երեք հոգինոց քննիչ յանձնախումբ մը զոր պարտականութիւնը կունենայ վարչութեան բոլոր հաշիւները քննելով անդամական ընդհանուր ժողովին իմացնելու:

### Է. Վարչութիւնն եւ պատիժ

1-. Այն Ազգայինները որոնք Միութեան նիւթառակին զանազան անդամները խորհրդակութեան հրաւիրելու, մատուցանեն վարչութեան թելադրութեամբ եւ ընդհանուր ժողովի որոշումով Միւթեան պատոյ անդամ կընտրուին:

2-. Այն անդամները որ յաջորդական երեք ամիսները առանց բանաւոր պատճառի իր ամսավճարը չ'տար, վարչութեան թելադրութեամբ եւ ընդհանուր ժողովի որոշումով Միւթեանէ կը հեռացուին:

3-. Այն անդամները որ Միւթեան մէջ երկպառակութիւն սերմանել կ'աշխատին եւ Միւթեան

Պկարունքներուն եւ գործունեան հակառակ ընթացքի մը մէջ կը զանուին վարչութեան կողմէ յաջորդական երկու ազգաբարութիւններէ վերջ, վարչութեան թելադրութեամբ եւ ընդհանուր ժողովի վակերացումով կը դադրին Միութեան անդամ նկատելիէ.

4-. Թաջորդաբար (4) չորս անդամ առաջնորդ բանապահ պատճառի վարչութեան ժողովներէն բացույայօղ անդամը առաջին ազդարարութենէ վերջ վարչութեան անդամակցութենէ կը դադրեալուի.

## Հ. Կազմակերպություն

1-. Միութիւնը լուծեռած կը համարուի այն պարագային երթ անդամներու թիւը (10) տասէն պահանջնական է:

2- Միութիւնը լուծուած պարագային գտնուած գոյքերն ու դրամները կը վիոխանձուին Մամութէյնի Ազգային թոքախտանոցին իսկ անոր չ'գոյութեան պարագային ազգային բարեկործական հաստատութեան մը, արիմիւները կը յանձնուին Ազգային Առաջնորդարանի,

3. Միութիւնը լուծուած պարագային հաշիւները  
կ'ենթարկուն Ազգային Առաջնորդարանի քննութեան  
և վաւերացման,

Մայիս 1, 1932 Կիրակի օր Կէսօրէ վերջ Թալասի  
և շրջակայից Հայրենակցական Միութեան անդամու-  
կան ընդհանուր ժողովի մէջ, ուր ներկայ էին 35 ան-  
դամներ, Ազգ. Առաջնորդարանի, 13 Ապրիլ 1926 թուա-  
կանով վաւերացուցած Հայրենակցական Միութեան  
Մրագիր Կանոնագիրը միաձայնութեամբ վերոյիշեալ  
ձեւով բարեփոխելով որոշուեցաւ Ազգային Առաջնորդա-  
րանի Կողմէ կրկին վաւերացուելէ վերջ գործադրութ-  
եան դնել զայն:

**ի դիմաց ընդհ ժողովի գիւանի**

Առենադայիր

Առենապետ

Ե գործադրութեան կը հաստատենք  
Առաջնորդարան Հայոց  
Կաթ փոխ . Լիբանանի  
Եղիշե ԱԾԲ . ԿԱՐՈՒԱՆ

932 Ըունիս 20

Հայութ շուրջ Ֆրանքի ու Ամստերդամ 1881, 1 ամռան ըն-  
առարկան մասն ուղի Ամստերդամում պիտի ապահովագու-  
ման Ծ մէջ լարձ ուր ՔՅՆ Ժիրոն զուտակցոց մաթ-  
ուառ Ե ՖՀՀ լինում է Ամստերդամուն քրի զատուր  
մասն ուղի Ամստերդամում առաջարկութափ ի ինչու  
լարձուացի ուստի ուժանացն ողբերածութ ուժան Ս  
արդութան մէջարքի առաջարկութ ի լուսնութան ի ուժ  
- Ամստերդամու ի ուժ մէջարկութափ մէջութ հարց հանդ  
պատճենացն առաջարկութափ մէջութ հարց հանդ

Գմարդ Ժիրոն նույն քանի ո

Դամասկոս

Պմարաման

Գմարատան ու մասն առաջանոր մ առաջի զատութ  
ըլլան անդարդութան  
կմասնադի մար նար  
ՀԱՅՈՒԹ ՀԿԱ ՀՅԱԲ Ապարան Ապարան Ապարան

Ս Տ Ա Յ Ա Ր Ա Ց Ֆ Հ Յ

2013



Armenia